

ԿԱՐԾԻՔ

Մտյոպա Հայրապետի Պետոյանի «Շուշի քաղաքի գրատպության պատմությունը (1828-1920 թթ.)» թեմայով Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության մասին

Շուշի քաղաքում գրատպության պատմությունը՝ սկզբնավորումից մինչև 1920 թվականը առանձին ուսումնասիրության նյութ դարձնելն արդիական է ինչպես գիտաճանաչողական, այնպես էլ 2020 թ. աշնանը Ադրբեջանի սանձազերծած և առայսօր շարունակվող հիբրիդային, ագրեսիվ պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակում Շուշի քաղաքի ռազմավարական նշանակությունը վերաիմաստավորելու առումներով: Այդպիսով ոչ միայն հատկանշվում են բերդաքաղաքի տակավին XIX դարում առևտրական, արհեստագործական ու մշակութային վերելքը և հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ու հոգևոր-մշակութային կյանքում կարևոր դերակատարումը, այլև պատեհաժամորեն բացահայտվում է Շուշիի պատմության կեղծարարությունը և սնուցում երբեմնի ծաղկուն քաղաքի ժամանակավոր օկուպացիայի հետ ոչ մի պարագայում չհամակերպվելու հայ առաջադեմ հասարակական-քաղաքական լայն շրջանների իրական տրամադրությունները:

Թեման կարևորվում է նաև այն առումով, որ Շուշիի գրեթե մեկդարյա մշակութային վերելքը դժվար է պատկերացնել առանց գրատպության ու հրատարակչական գործի: Մանավանդ, որ Շուշին համարվում է հայ տպագրության կարևորագույն օջախներից մեկը նաև այն փաստարկմամբ, որ բուն Հայաստանում, ըստ հերթականության, երկրորդն էր Էջմիածնից (1771 թ.) և երրորդն ամբողջ Այսրկովկասում՝ Թիֆլիսից (1823 թ.) հետո, իսկ մեսրոպատառ առաջին գիրքը Շուշիում լույս է տեսել 1828 թվականին՝ նախորդ տարում հնամենի Արցախում շվեյցարացի քարոզիչների բացած առաջին տպարանում:

Ատենախոսության հեղինակին հաջողվել է հասնել հայ տպագրության պատմության մեջ Շուշիի տպարանների ու գրահրատակչության ունեցած դերն ու նշանակությունը ցույց տալու նպատակին: Ս. Պետոյանը արխիվային հարուստ նյութերի, պարբերականների ու պատմագիտական գրականության

տեղեկությունները համակարգել և հմտորեն կիրառել է հետազոտական խնդիրները կատարելիս: Հեղինակը գիտական շրջանառության մեջ է դրել նորահայտ սկզբնաղբյուրներ և Շուշիում հրատարակված գրքերի մասին արժեքավոր տեղեկություններ: Նրա հետազոտական աշխատանքի արդյունքների հիման վրա կատարված եզրակացությունները կարող են օգտակար լինել ընդհանրապես՝ հայ գրքի և մասնավորապես՝ Արցախի մշակույթի պատմության հետազոտումնասիրությունների համար: Ս. Պետոյանին հաջողվել է վերանայել և շտկումներ կատարել Շուշիում տպագրության ու գրահրատարակչական գործի պատմության նախորդ ուսումնասիրողների, այդ թվում՝ տողերիս հեղինակի աշխատանքներում արժարժված փաստական տվյալների մեջ, ինչը կարևոր է հիշյալ թեմայի հետազոտումնասիրությունների և պատմագիտական ճշգրտումների համար:

Կարող ենք փաստել, որ ատենախոսության հեղինակը կատարել է բավական մեծածավալ աշխատանք, դրսևորել հետազոտական խնդիրների իմացություն և փաստերի վերլուծություն ու անհրաժեշտ եզրակացություններ կատարելու հմտություն:

Միաժամանակ նկատել ենք նաև մեթոդաբանական, տեսական ու տեխնիկական որոշակի թերություններ:

Կարծում ենք, որ բազելի քարոզիչների հիմնադրած տպարանին առանձին զլուխ հատկացնելը և մանավանդ ցարական իշխանությունների հետ նրանց հարաբերությունների պարզաբանմանը մեծ տեղ հատկացնելը չեն տեղավորվում ատենախոսության բուն նպատակի և խնդիրների մեջ: Մանավանդ, որ Շուշիում տպագրության ու գրահրատարակչության գործի պատմության նախորդ ուսումնասիրողները Շուշիի առաջին տպարանի էվոյուցիան և անվանումների փոփոխություններն, ըստ էության, բավարար չեն համարել տարբեր տպարանների մասին (էջ 179) խոսք բացելու համար: Մանավանդ, որ Շուշիում բազելցի բողոքականների բացած առաջին տպարանը հայկական համարելը հարաբերական է (էջ 8):

Խոսելով XIX դարի 80-ական թվականների Շուշիի բողոքականների(որոնցից էին նաև տպարանատեր Մահտեսի-Հակոբյանցները) մասին, ատենախոսության հեղինակը խուսափել է նրանց հնարավոր առնչությունները բազելցի բողոքականների

գործունեության հետ բացահայտելուց (էջ 148), ինչը, թերևս, կարող էր որոշակի իմաստ հաղորդել շվեյցարացիների հրատարակչական ու «լուսավորչական» գործունեությանը առանձին գլուխ նվիրելու մտահղացմանը:

Անիմաստ ժամանակ ու չարդարացված տեղ է հատկացված բազելյան քարոզիչների համար տպագրիչի հարմար թեկնածու Ամերկրոմբին, որին վերագրված «գրագիտությունն ու ամբարած գիտելիքները» (էջ 17), փաստորեն, կասկածելի են դառնում ատենախոսության հաջորդ էջերի հակասական տեղեկություններով («...1828 թ. քարոզիչների մի զեկուցագրում կարդում ենք, որ նույն թվականի փետրվարի 22-ին տպագրիչ Աբերկրոմբին, որը մինչ այդ հասցրել էր ձեռք բերել հայերենի նվազագույն գիտելիքներ, այնքան էր հմտացել տպագրական գործում, որ քարոզիչները նրան վստահեցին աշխարհաբարով տպագրել «Լեռան քարոզը» (Մատթեոսի ավետարանի Ե.-Է. գլուխները՝ Քրիստոսի խրատներով) գրքույկը», էջ 20, «...Շուշիի տպարանի առաջին տպագրիչ Աբերկրոմբին, բողոքական քարոզիչների կարծիքով, չէր կարողանում բավարարել օրեցօր աճող տպագրական պահանջները», էջ 28):

Ատենախոսության թեմայի համար շատ ավելի պահանջված էր Շուշիում տպագրության գործի զարգացմանը նպաստած կամ պատմագրությունն սկզբնավորած ժամանակակիցների (օրինակ՝ **Պ. Չաքարեանի, Բանուրի, Պետի** (էջ 59, ծ. 254) կամ «ումն շուշեցի **Ղևոնդ Ասրյանի** (Гевонд Асриев)» (էջ 103)) և այլոց ինքնության կամ դերի բացահայտումը:

Համոզիչ չէ ատենախոսության հեղինակի հետևյալ պնդումը. «Մակայն պետք է նկատի ունենալ, որ նա (Լեոն.-Մ.Ն.) սույն հիմնախնդրին (Շուշիի գրատպության պատմությանը.-Մ.Ն.) անդրադարձել է հպանցիկ, քանի որ Շուշիի գրատպության պատմությունն անմիջապես չի առնչվել իր աշխատությունների բուն թեմաներին (էջ 8):

Հանրահայտ է, որ Լեոյի պատմագիտական հարուստ ժառանգության մեջ կարևոր տեղ ունեն հայ տպագրության պատմությանը նվիրված աշխատությունները, որոնցից մանավանդ «Հայկական տպագրություն» աշխատությունը բարձր գնահատականների է արժանացել ինչպես ժամանակակիցների, այնպես էլ հայ գրատպության պատմությունն ուսումնասիրած հետագա մասնագետների կողմից:

Ըստ երևույթին, եթե այս աշխատությունն անավարտ չմնար, հեղինակն անպայման, նաև ականատեսի ճշգրտությամբ, ներկայացնելու էր իր հայրենի քաղաքի տպագրության գործը: Ինչպես հայ գրքի պատմությունն ուսումնասիրած լեզվաբան, գրականագետ, մատենագետ Ռաֆայել Իշխանյանն է նշել, Լեոն «ծրագրած է եղել հայ տպագրության պատմության մեջ ընդգրկել նաև XIX դարը, և դա պետք է կազմեր «Հայկական տպագրության» երկրորդ մասը, քանի որ (այդ աշխատության.- Մ.Ն.) առաջին երկու հատորները հեղինակը համարել է առաջին մաս» (Լեո, Երկերի ժողովածու:10 հատորով, հ. 5, Ե., 1986, էջ 622): Հետևաբար, «Շուշիի գրատպության պատմությունն անմիջապես չի առնչվել Լեոյի աշխատությունների բուն թեմաներին» ձևակերպման փոխարեն ավելի ճշգրիտ կլիներ նշել, որ պատմաբանը պարզապես չի հասցրել ավարտել իր կարևոր նախաձեռնությունը: Ի դեպ, զարմանալի զուգահեռությամբ Ռաֆայել Իշխանյանը ևս չի հասցրել գրել «Հայ գրքի պատմության» 2-րդ և 3-րդ հատորները (տես Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հրատ. պատր. Ա. Նիկողոսյանը, առաջաբանը՝ Վ. Դերիկյանի, Ե., «Անտարես», 2012, էջ 7):

Կարծում ենք, որ աստենախոսության հեղինակը բավական զուսպ է գնահատել Շուշիում տպագրության ու գրահրատարակչական գործի պատմության ուսումնասիրության բնագավառում բանասիրական գիտությունների դոկտոր Սմբատ Ավագյանի ակնառու ավանդը:

Պատմականության մեթոդաբանության տեսանկյունից անհասկանալի է աստենախոսության ժամանակագրական ընդգրկումը Արցախի խորհրդայնացմամբ (1920 թ. մայիս) եզրափակելը, քանի որ 1920 թ. մարտի 23-ին Շուշիի հայկական մասի հրկիզման և արմենոցիդի հետևանքով այստեղ կործանվեց նաև հայկական մշակույթը, այդ թվում՝ գրատպությունն ու հրատարակչական գործը: Խորհրդայնացումը պատմական գործընթացների ջրբաժան համարելը՝ որպես խորհրդահայ պատմագրության մնացուկ, պարբերական մամուլի պատմության պարբերացման առումով ժամանակավրեպ ենք համարել ավելի քան մեկ տասնամյակ առաջ հրատարակած մեր ուսումնասիրություններում (տես, օրինակ, Հարությունյան Մ., Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009թթ.), Պատմաքննական

ներածությամբ, ծանոթագրություններով, մեկնաբանություններով, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս», 2010, էջ 9, 32 ն):

Ակներևաբար թերի է «Շուշիի գրահրատարակչական գործի ձեռքբերումներն ու դժվարությունները» ներկայացրած ժամանակի պարբերական մամուլի թվարկումը (էջ 7, ծանոթ. 15):

Նկատելի են տեխնիկական բազմաթիվ թերություններ ու վրիպակներ: Դրանցից են.

- 8-րդ էջի 20-րդ ծանոթագրությունը հայտնվել է 9-րդ էջում

-միակերպությունը պահպանված չէ գիտական ապարատի մատենագիտական տվյալներում. ա) 20-րդ ծանոթագրությունում և մատենագիտական ցանկում (էջ 191-192) ցիտված հեղինակների հայրանունները կամ նշված են, կամ նշված չեն, բ) 23-րդ էջի 99-րդ և 25-րդ էջի 105-րդ ծանոթագրություններում մատենագիտական տվյալները նույնությամբ երկար(լրիվ) են նշվել, մինչդեռ նույն գրականության մատենագիտական տվյալները երկրորդ և հաջորդ անգամները համառոտագրվում(կրճատվում) են:

-Ստբերն ու նույն նախադասություններն անհարկի կրկնվում են մինչև անգամ իրար հաջորդող էջերում. ա) «Գրքույկը Շուշիում ունեցել է երկու վերատպություն՝ 1832 թ. (1500 տպաքանակով) և 1835 թ. (1200 տպաքանակով)»(էջ 27 և 28):

բ)Բողոքականների տպարանի և անշարժ գույքի վաճառքի մասին էջ 48 և 59:

գ)Ռուսական կայսրությունում տպագրության գրաքննությունը չէր շրջանցում նաև «մանր տպագրությունները»(էջ 115 և 121):

դ)Թերթի խմբագիր և հրատարակության պատասխանատու էր նշա-նակվել Ն. Յարամիշյանը(էջ 172 և 173):

«Թաթար(մահմեդական) ազգաբնակչություն» բառակապակցությունը պատմականորեն ու քաղաքականապես սխալ է եկվոր տարրի(ավելին՝ գավթիչների) վերաբերյալ օգտագործելը(էջ 14):

հիմադիրը(էջ 7, ճ.11) պետք է լիներ հիմնադիրը

հեռանուց(էջ 25) պետք է լիներ հեռանալուց

գրացուցակումներում(էջ 52) պետք է լիներ գրացուցակներում:

«Էջմիածնի գրատուն (գրադարանում) պահելու» (էջ 66) պետք է լիներ «Էջմիածնի գրատանը (գրադարանում) պահելու»:

«ողջ սարքավորումներով» (էջ 74) կամ տարածքում(էջ 175) կամ ընթացքում(էջ 178) պետք է լիներ «ամբողջ սարքավորումներով» կամ «ամբողջ տարածքում» կամ «ամբողջ ընթացքում»:

գործունեությունների(էջ 76) պետք է լիներ գործունեության:

«1720-ական թվականների ապստամբության»(83) փոխարեն ավելի ստույգ կլիներ «1720-ական թվականների ազատագրական պայքարի» ձևակերպումը, մանավանդ եթե խոսքը գնում է դրա առաջնորդներից մեկի՝ Գնձասարի կաթողիկոսի մասին:

«բարերարարներ»(էջ 84) պետք է լիներ «բարերարներ»:

«Արցախի Ս. Հակոբ վանքում» (էջ 84) պետք է լիներ «Արցախի Ս. Հակոբա (կամ Մեծիրանից) վանքում»:

պարբերականների(գ)(էջ 121, 175, 178) պետք է լիներ պարբերականների(գ):

Տեխնիկական թերություններ ու վրիպակներ կան նաև ատենախոսության այլ էջերում(13, 25, 35, 42, 50, 71, 104, ծ. 47, 122, 125, 133, 136, 141, 149, ծ. 600, 153, ծ. 625 ևն):

«Մինչ օրս գիտական գրականության մեջ շրջանառվում է այն միտքը, որ 1828-1920 թթ. Շուշիում տպագրվել է 150 անուն գիրք» պնդումը սուրբեկտիվ է, որովհետև այդ թիվը կասկածի տակ են առել նաև նախորդ ուսումնասիրողները, այդ թվում՝ տողերիս հեղինակը (տես Арутюнян М.. Издательское дело и периодика в Шуши как фактор развития армянской общественно-политической и научной мысли, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ (Խմբ. խորհուրդ), հատոր 4, Ե., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2014, էջ 380, <https://razmavaraget.files.wordpress.com/2019/07/razmavarakan-anvtangayinhetazotutyunner-04.pdf>):

«Ստացվում է, որ Շուշիի գրատպության պատմության մեջ Մ. Պապյանցն առաջին անհատն էր, ով ստանձնել էր գրքերի տպագրական ծախսերը» ենթադրությունը չի հիմնավորվում որևէ սկզբաղբյուրով(էջ 129):

Ավելի շատ խոսվում է մանր հաշիվների, ֆինանսական պարտավորությունների չկատարման, կենցաղային հարցերի, քան կոնկրետ տպարանի գործունեության, արտադրանքի և դրա ունեցած նշանակության մասին (էջ 137-139):

«1828-1920 թթ. Շուշիում տպագրված գրքերի թիվը կարող է անցնել 300-ից» (էջ 179): Սակայն օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկում նշված են Շուշիում տպագրված ընդամենը 10 անուն գիրք և երկու պարբերական: Այս թվերում պարզություն կարող էր մտցնել Շուշիում տպագրված գրքերի ճշգրտված և ըստ հրատարակության տարեթվերի դասակարգված ցուցակի կազմումը և ներկայացումը ատենախոսության հավելվածի տեսքով:

«Կաճառ» տարեգրքի անունը և մատենագիտական տվյալներն առհասարակ բացթողնված են ոչ միայն տեքստում ու գիտական ապարատում (էջ 9, ծ. 19-ի շարունակ., Ն. Բաղդասարյանի և Յ. Հարությունյանի հոդվածները, էջ 58, ծ. 251, էջ 171, ծ. 695), այլև նույնիսկ օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկում (էջ 193[6], 194[19]):

Թերություններ կան նաև օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկում:

Նշված է՝ 38. Հասան Ջալալեանց Եսայի կաթողիկոս, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, տպ. առաքելական աթոռոյ Ս. Յակովբեանց, 1868, ԺԴ, 58 էջ, բայց չի նշված նույն գրքի Շուշիի հրատարակությունը, որի մասին խոսք կա ատենախոսությունում(էջ 83): Կամ նշված է՝ 18. Բայրոն Ջ., Շիլիոնեան կալանաւոր, թարգմ.՝ Մովսիսի Զօհրապեանց Արցախեցոյ, երկրորդ տիպ, Շամախի, տպ. Իսկէպէնսկու, 1857, 24 էջ, սակայն, զարմանալիորեն նշված չէ(են) այդ գրքույկի Շուշիի տպագրություն(ներ)ը:

Նշված է՝ 74. Օրմանեան Մաղաքիա արքեպս., Ազգապատում, հտ. Գ., Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2001, 5970 էջ, սակայն, բացառվում է, որ Գ հատորը այդքան էջեր ունենար:

Ատենախոսության հեղինակը հաճախ գրում է հակասական կամ իրարամերժ կարծիքների, ինչպես նաև պարզաբանման կարիք ունեցող հիմնահարցերի մասին(էջ 97, ծ. 411), սակայն սեփական կարծիքը կամ գոնե հիպոթեզը չի արտահայտում, իսկ հիմնահարցերն այդպես էլ մում են անպատասխան, ինչը բնավ հասկանալի չէ, մանավանդ, եթե դրանք անմիջապես առնչվում են ատենախոսության թեմային և ըստ էության հեղինակի ուսումնասիրության նյութ պետք է դառնային(էջ 19, 38, 71-72, 97, 124, 127, 130, 143, 144, 165-166, 166, ծ. 668, 168-169, 176):

Տարօրինակ է ատենախոսության հեղինակի հետևյալ պնդումը. «Վերադառնալով Շուշիի գրահրատարակչական կյանքին՝ նշենք, որ 1874-1877 թթ. Շուշիում գործող տպարան չկար»(էջ 101), որովհետև նախորդ էջում նշել է , որ «1874 թ. Խ. Ստեփանեին մեծ դժվարությամբ հաջողվեց դպրոցի տպարանում հրատարակել ամսագրի մի քանի համարները»(էջ 100):

Կարծում ենք, որ ատենախոսության հեղինակն իր կարծիքը պետք է արտահայտեր Խորեն Ստեփանեի հետևյալ խոսքերի առթիվ. «Հայկական աշխարհ» ամսագիրն «սկսել է տպագրել Շուշիում, որտեղ չկար ո՛չ օգնական, ո՛չ տպարան, ո՛չ գրաքննիչ, ո՛չ գրաշար, ո՛չ թուղթ, ո՛չ մեկան, ո՛չ հեռագիր, ո՛չ գրադարան, ո՛չ թատրոն, իսկ լրագիր ստացողները խիստ սակավաթիվ էին»(էջ 100):

Կիրառված բառերը երբեմն չեն համապատասխանում իրենց բուն նշանակությանը.

Եկեղեցական բնույթի գրքեր(էջ 71)

թեմի պայծառության համար(էջ 76)

Սինոդի բարեհաճությանը(էջ 136)

«թերթի դիտարկող»(172-174) տառացի թարգմանություն է, ավելի հասկանալի է «գրաքննական լիազորը»:

«Օրագիր լինելուց զատ այն պարունակում է նաև աշակերտների վարքականոններ, որոնք չափազանց կարևոր դեր են խաղացել նրանց դաստիարակության համար»(էջ 159). վկայությունների կամ սկզբնաղբյուրների վրա հղում լինելու դեպքում այս միտքը արժանահավատ կլիներ:

Թեմայից շեղվելու օրինակներ կան: Այսպես 164-րդ էջի 662-րդ ծանոթագրությունում խոսվում է Պ. Դուրյանի գրքի մատենագիտական վրիպակների մասին, որոնք Շուշիի գրատպության՝ ընդհանրապես, և մասնավորապես՝ այդ գրքի Շուշիի տպագրության հետ, որևէ աղերս չունեն:

Մանավանդ այս օրերին բավական սկզբունքային կլիներ քննարկել 1901 թվականին Ա. Մահտեսի-Հակոբյանցի տպարանում հրատարակված Ահմեդ-բեկ Ջեվանշիրի «О политическом существовании Карабагского ханства с 1747 по 1805 год» գրքույկի տպագրության(էջ 165) նպատակահարմարությունը, որովհետև այն լինելով քաղաքական պատվեր և խաների ու բեկերի անհիմն հավակնությունները հայկական

կավածքների նկատմամբ «հիմնավորելու» հերթական փորձ, հանկարծ հայտնվում է հայ ձեռնարկատիրոջ տպարանում, տիրաժավորվում և տարածվում է:

Օգտագործված օտարահունչ անձնանունները չեն նույնականացվում կամ բացահայտվում: Օրինակ, «ճար-տարապետ, ինժեներ Նիկիտա Գոնդակսազովը»(էջ 172-173) նույն ինքը՝ Նիկիտա(Մկրտիչ) Արտեմի (Հարությունի) Ղոնդադսազյանը [հոկտեմբեր, 1876, Շուշի - 1943, Մոսկվա]: Նա 1904-ին Սանկտ-Պետերբուրգի Քաղաքացիական ինժեներների ինստիտուտում ստացել է համապատասխան որակավորում: 1904-1912-ին եղել է Շուշի քաղաքի գլխավոր ճարտարապետը(նախագծել քաղաքի վերջին՝ 4-րդ հատակագծը), ինչպես նաև քաղաքի գրաքննական լիազորը: Այնուհետև տեղափոխվել է Մոսկվա(տես Խաչատրյան Ա., Անվանի շուշեցիները: Կենսագրական տեղեկատու, Մտեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2017, էջ 214):

Միով բանիվ, նկատված թերություններն ու վրիպակները շտկելի են, ըստ էության չեն նսեմացնում ատենախոսության հեղինակի կատարած մեծածավալ հետազոտական աշխատանքի արդյունքները:

Քննության առարկա գիտական աշխատանքը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին և հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պատմական
գիտությունների թեկնածու, դոցենտ
24.03.2023 թ.

Հարությունյան Մ. Ա.

հասարակական գիտությունների թեկնածու
Վ. Հ. Զահրաբյան
Զահրաբյան Վ. Հ.
24.03.2023թ.